ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2020-2021 ուստարի)

12-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ե՞րբ է վերջին անգամ հիշատակվում Հայասա պետությունը. 0,5 մ.
   ա/ Ք.ա. XIII դ. սկիզբ բ/ Ք.ա. XIII դ. վերջ գ/ Ք.ա. XIV դ. վերջ դ/ Ք.ա. XII դ. սկիզբ
2. Որքա՞ն էր Ռուսայի ջրանցքի երկարությունը. 0,5 մ.
   ա/ 24 կմ բ/ 72 կմ գ/ 25 կմ դ/ 70 կմ
3. Ո՞ր թվականին է Փոքր Հայքը ռազմակալվել Պոնտոսի կողմից. 0,5 մ.
   ա/ Ք.ա. 111 թ. բ/ Ք.ա. 112 թ. գ/ Ք.ա. 110 թ. դ/ Ք.ա. 94 թ.
4. Ո՞ր թվականին է թագավոր հռչակվել Անտիոքոս I-ը. 0,5 մ.
   ա/ Ք.ա. 70 թ. բ/ Ք.ա. 71 թ. գ/ Ք.ա. 72 թ. դ/ Ք.ա. 74 թ.
5. Այրարատ նահանգի ո՞ր գավառում էր գտնվում Ձիրավի դաշտը. 0,5 մ.
   ա/ Բասեն բ/ Բագրևանդ գ/ Ծաղկոտն դ/ Կոգովիտ
6. Ե՞րբ է գումարվել Շահապիվանի եկեղեցական ժողովը. 0,5 մ.
   ա/ 441 թ. բ/ 444 թ. գ/ 443 թ. դ/ 447 թ.
7. Քանի՞ գավառների է բաժանվել Երևանի նահանգը 1874 թ. օրենքով. 0,5 մ.
   ա/ 6 բ/ 7 գ/ 8 դ/ 5
8. Ե՞րբ է բացվել Հայոց համազգային շարժման առաջին համագումարը. 0,5 մ.
   ա/ 1989 թ. նոյեմբերի 28 բ/ 1989 թ. մայիսի 25 գ/ 1989 թ. հունվարի 11 դ/ 1989 թ. նոյեմբերի 4
9. Ո՞ր երկրամասն է Արտաշես I-ը վերադարձրել Մեծ Հայքին Սելևկյանների դեմ պայքարի արդյունքում: 0,5 մ.
10. Ո՞ր թվականին է հայկական բանակը գրավել Եգիպտոսին սահմանակից Պտղոմայիս քաղաքը: 0,5 մ.
11. Ե՞րբ է կառուցվել Ս. Հռիփսիմեի տաճարը: 0,5 մ.
12. Ո՞ր թվականին է Յակով Զարոբյանն ընտրվել ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ Շրջանառության մեջ մտավ գյուղմիասիարկը
    բ/ Հայաստանի տնտեսությունը հասավ նախապատերազմյան՝ 1913 թ. մակարդակին
    գ/ Հայաստանի գավառային բաժանումը վերացվեց և ստեղծվեցին 25 շրջաններ
    դ/ Էջմիածնում խեղդամահ արվեց կաթողիկոս Խորեն Մուրադբեգյանը
    ե/ Հատուկ որոշումով արգելվեց եկեղեցու կողմից Հայոց եղեռնի օրվա՝ ապրիլի 24-ի նշումը
    զ/ Ստեղծվեց Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ)
    է/ Հովհաննես Ադամյանը աշխարհում առաջինը ստեղծեց և Երևանում ցուցադրեց եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքը
    ը/ Ա. Թամանյանը կազմեց Երևանի գլխավոր հատակագիծը
    թ/ Կազմակերպվեց Հայաստանի կերպարվեստի թանգարանը
    ժ/ Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմադրությամբ բացվեց հանրապետության առաջին պետական դրամատիկական թատրոնը

1	2	3	4	5	6	7	8	9	10

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Աղբյուր Սերոբ
    2. Հրայր (Արմենակ Ղազարյան)
    3. Գևորգ Չավուշ
    4. Անդրանիկ Օզանյան
    5. Գրգո (Գրիգոր Մոսեյան)
    6. Արաբո

1	2	3	4	5	6

    ա. Ահարոնք բ. Մկդենք գ. Կոռթեր
    դ. Շենիկ ե. Շապին Կարահիսար զ. Սոխորդ
15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա/ Մեզոլիթյան դարաշրջանում տոհմական համայնքները անցում կատարեցին արտադրող տնտեսության:
    բ/ Իշպուինին արձանագրեց առաջին խոշոր հաջողությունները Ք.ա. 810-ական թթ. կեսերին՝ Ուրմիո լճի ավազանի հարավում ընդլայնելով թագավորությունը և ներառելով Արդինի-Մուսասիր երկիրը:
    գ/ Կյուրոս II Մեծը զոհվել է 525 թ.:
    դ/ Երվանդ II-ի մասին վերջին տեղեկությունները վերաբերում են Ք.ա. 360-ական թթ.:

ե/ 181-179 թթ. պատերազմ բռնկվեց Փոքր Ասիայում՝ մի կողմից Պոնտոսի ու Փոքր Հայքի, իսկ մյուս կողմից՝ Կապադովկիայի, Բյութանիայի ու նրանց դաշնակիցների միջև:
զ/ Ք.ա. 87 թ. Միհրդատ II-ը ստիպված էր հաշտություն խնդրել Տիգրան II-ից:
է/ Համազասպ Մամիկոնյանը Սահակ Պարթևի դստեր՝ Խոսրովանույշի ամուսինն էր:
ը/ Ամբողջ Անդրկովկասից 1949 թ. հիմնականում Ալթայի երկրամաս է աքսորվել մոտ 15500 հայ:
թ/ 1979 թ. ՀԽՍՀ-ում մտցվել է ութամյա պարտադիր կրթություն:
ժ/ Մոնթե Մելքոնյանը (Ավո) ծնվել է 1957 թ. Վայսելիայում՝ Ֆրեզնոյի մոտ (Կալիֆոռնիա, ԱՄՆ):

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա/ Նախապատմական ժամանակներում ներկայիս ժողովուրդների նախնիները կազմել են մեծ ընտանիքներ, որոնց գիտնականները կոչում են «մայր ժողովուրդներ»:
բ/ Ըստ խեթական աղբյուրների Հայկական լեռնաշխարհը լուսնի հանգրվանն էր:
գ/ Հայկական լեռնաշխարհի բարձր դիրքը ռազմավարական առումով խոցելի է դարձրել այն:
դ/ Ըստ «Որոգայթ փառացի» «Հայոց տունը» լինելու էր ապագա Հայաստանի գործադիր իշխանությունը:
ե/ Էրզրումի նահանգի փաշան համատեղում էր կայսրության հարավային մարզերի զորքերի հրամանատարի՝ սերասկյարի պաշտոնը:
զ/ 1920-ական թթ. կազմակերպվեցին կոմունաներ, որոնք այլ կերպ կոչվում էին սովխոզներ:
է/ 1830-1840-ական թթ. Օսմանյան կայսրությունում գյուղացիներից գանձվող գլխավոր հարկը աշարն էր:
ը/ Օսմանյան կայսրությունում հողազուրկ գյուղացիները՝ մարաբաները իրավունք ունեին աշխատել միայն վակուֆային հողերում:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ Միջին քարի դարում հասարակության մեջ մեծանում է ընտանիքի դերը:
բ/ 1961 թ. Սփյուռքում լույս էր տեսնում 134 անուն պարբերական, որից 16-ը՝ օրաթերթ:
գ/ Ք.ա. 715 թ. աշնանը հյուսիսից անակնկալ հայտնվեցին քոչվոր կիմերների ցեղերը՝ ասպատակելով Վանի թագավորության տարածքները:
դ/ Քրիստոնեության ընդունումից առաջ հայալեզու նշանագրերի կիրառության մասին է վկայում հույն պատմիչ Փիլոստրատոսը (I-II դդ.):
ե/ Գաբրիել վարդապետ Այվազովսկին հրատարակում էր «Մասյաց Աղավնի» պարբերականը:
զ/ 1991 թ. գարնանը Ադրբեջանի իշխանությունները, խորհրդային բանակի հետ համագործակցելով, մշակեցին «Կոլցո» («Օղակ») ռազմական գործողության ծրագիրը:
է/ 804 թ. Աշոտ Մսակերը խալիֆայության կողմից պաշտոնապես ճանաչվեց հայոց իշխանաց իշխան, իսկ նրա եղբայր Շապուհը նշանակվեց սպարապետ:
ը/ XVII դարի սկզբին օսմանյան արքունիքում սկսվել էին երկպառակություններ:
թ/ 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը Նյու Յորքում կայացած Հայկական համաշխարհային կոնգրեսին մասնակցում էին 22 երկրների 715 պատգամավորներ:
ժ/ «Նաիրի» երկրանունն առաջին անգամ հիշատակված է Ք.ա. XIII դ. առաջին կեսին Ասորեստանի Սալմանասար I թագավորի կողմից:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.
Մայիսի 18-ին կնքված անգլո-թուրքական գաղտնի համաձայնագրով Մեծ Բրիտանիան Թուրքիայից ստացավ Կիպրոս կղզին՝ փոխարենը խոստանալով պաշտպանել թուրքական պահանջները:
19. Կարդացե՛ք հայ և վրաց զորքերի՝ Գանձակի մոտ հանդիպման մասին սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
... Կարգավորելով ամեն ինչ, վերցնելով մոտ տասը հազար ընտիր սպառազեն ռազմիկ, որոնց հետ նաև քահանաների դասն ու մեր սպասավորներին, մեծ ճոխությամբ ու խնջույքներով հայոց իշխանությունը վերականգնված համարելով՝ գնացինք և իջևանեցինք Գանձակ քաղաքի մոտ՝ Չոլակ կոչվող վայրում: Վախթանգ թագավորը ևս իջևանել էր քաղաքի այն կողմում... Մենք գնացինք, և նրա բանակին մոտենալու պահին իր զորքերին հրամայեց ընդառաջ գալ մերայիններին... Հրացանների ձայնից որոտում և թնդում էր այն վայրը, և նրա փոշեխառն ծուխը, ինչպես կայծակնափայլ ամպ, ծածկում էր արեգակի ճառագայթները, որ մինչև անգամ հազիվ էին իրար տեսնում... Վախթանգը... մեզ և հրամանատար կարգված տղաներին ու

մելիքներին... քաջալերեց. «Այսուհետև զորացե՛ք և քա՛ջ եղեք՝ որպես քաջարի զավակներ, և ոչ ոքից ու ոչնչից մի՛ երկնչեք, որովհետև ահա հասել է քրիստոնյաների փրկության ժամանակը»:

ա. Ո՞վ է այս տեքստի հեղինակը:

բ. Ո՞ւմ (անունը) զորքերի ժամանմանն էին սպասում հայկական և վրացական զորքերը:

գ. Չոլակի մոտից ո՞ր երկրամաս են շարժվել հայկական զորքերը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Միջագետքյան դյուցազնավեպում անմահություն փնտրող հերոս ...-ը (1) բռնում է «ճանապարհը դեպի Արևելք», գնում ...-ի (2) հոսանքն ի վեր և ճանապարհին հաղթահարում ... (3) լեռները:

21. Տրամաբանական խնդիր. *Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 6800 տարեկան է, նախնադարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:* 1 մ.

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:

բ. Ո՞ր աշխարհն է նրան սահմանակցում արևմուտքում:

23. Տիգրանյան թագով ո՞ր արքայի քանդակն է նկարի ձախ կողմում. 0,5 մ.

24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

1915 թ. այս ծաղրանկարից կարելի է հասկանալ, որ պատկերված են հակառակորդ պետությունների զինվորներ: Հեղինակը փորձել է ակնարկել, որ նրանցից մեկը շոշափելի առավելություն ուներ մյուսի նկատմամբ:

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում ձախ կողմում պատկերված նստած զինվորը:

բ. Ո՞ր քաղաքի գրավումն էր գերակշռող կողմը, ի վերջո, տեսնում հեռանկարում:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Քանի՞ հոգուց էր բաղկացած Սոլոնի ստեղծած ժողովրդական ժողովի կողմից ընտրված խորհուրդը (բուլե).
   ա/ 300 բ/ 100 գ/ 400 դ/ 50 0,5 մ.
2. Ո՞ր թվայանին է Լյու Բանը իրեն հռչակել կայսր.
   ա/ Ք.ա. 204 բ/ Ք.ա. 140 գ/ Ք.ա. 202 դ/ Ք.ա. 200 0,5 մ.
3. 1883-1903 թթ. եվրոպական երկրներում քանի տոկոսով է աճել զինվորների թվաքանակը.
   ա/ 15 % բ/ 25 % գ/ 35 % դ/ 45 % 0,5 մ.
4. Քանի՞ նորանկախ երկրներ են հայտնվել աշխարհի քարտեզի վրա 1944-1954 թթ.
   ա/ 10 բ/ 15 գ/ 18 դ/ 20 0,5 մ.
5. Քանի՞ երկրների տարածքում են եղել ռազմական գործողություններ Երկրորդ աշխարհամարտում: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

   1. Քլոդվիգ
   2. Կարլոս Մեծ
   3. Հենրիխ I
   4. Օտտոն I

   ա. 919-936 թթ. բ. 936-973 թթ. գ. 768-814 թթ. դ. 486-511 թթ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

   ա/ Պելոպոնեսյան պատերազմներն ավարտվել են Ք.ա. 402 թ.:
   բ/ Ք.ա. 59 թ. Կեսարն ընտրվել է կոնսուլ:
   գ/ 1543 թ. Իվանը թագադրվել և ընդունել է ցար (կայսր) տիտղոսը:
   դ/ Անտանտի կողմից պատերազմի մեջ են մտել նաև Լատինական Ամերիկայի 20 երկրներ:
   ե/ Ֆրանսիայում 1805 թ. դպրոցն անջատվել է եկեղեցուց, իսկ եկեղեցին՝ պետությունից:
   զ/ Վերսալյան հաշտությամբ սահմանված 132 մլրդ մարկ գերմանական ռազմատուգանքների 52 %-ը պետք է ստանար Ֆրանսիան:
   է/ 1927 թ. Ռեզա խանը մեջլիսի որոշմամբ հռչակվել է Իրանի շահ՝ հիմնելով Փահլավիների արքայատոհմը:
   ը/ 1927-1935 թթ. Չինաստանում տեղի է ունեցել քաղաքացիական պատերազմ գոմինդանականների ու կոմունիստների միջև:
   թ/ 1990 թ. Ջորջ Բուշ Ավագը շրջանառության մեջ է դրել «Նոր աշխարհակարգ» հասկացությունը:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)

   ա. Երուսաղեմի թագավորությանը ենթակա խաչակրաց պետություններից 2-ը,
   բ. Նրանց պաշտպանության համար ստեղծված հոգևոր-ասպետական միաբանություններից 2-ը:
9. Աշխատանք ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է ընդհանուր գունանշված:
բ. Ե՞րբ է այն գոյություն ունեցել (ստեղծման և վերացման տարին, ամիսը և ամսաթիվը):

10. Հին աշխարհի ո՞ր նշանավոր գործչի դրամն է պատկերված ստորև. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

19-րդ դ. սկզբի աշխարհաքաղաքական իրավիճակը ցույց տվող ծաղրանկարում պատկերված գործիչները խորհրդանշում են 2 պետությունների, որոնք բաժանում են աշխարհը միմյանց միջև: Նրանցից աջ կողմում պատկերվածը փորձում է իր կողմը քաշել նոր պատառ՝ Եվրոպան:

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում աջ կողմում պատկերված անձը:
բ. Նշե՛ք այդ պետության ղեկավարի անունը և ազգանունը նշված ժամանակաշրջանում:
գ. Ո՞րն էր նրան ծովում հակազդող երկիրը, որ պատկերված է ձախ կողմի անձի տեսքով:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

10.03.2021 թ.